# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար ինտերնետային կապի տրամադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/16» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «02» դեկտեմբերի, 2019թ
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Եղիազարյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետ.

*հանձնաժողովի անդամներ՝*

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու.

**Էդգար Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու.

**Արթուր Թամրազյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ.

**Արման Հարությունյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության առաջատար մասնագետ:

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Օֆելյա Աստրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

---

1. **Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/16» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2019թ.-ի դեկտեմբերի 2-ին, ժամը 10:00-ին:

2. **Տեղեկություն՝ գնման առարկաների ընդհանուր գնի վերաբերյալ.**

Գնման ընթացակարգը կազմակերպվել է <<գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը |
|---|---|
| 1 | Ինտերնետային կապի տրամադրման ծառայություններ |
| 2 | Ինտերնետային կապի տրամադրման ծառայություններ |

3. **Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝**

| Մասնակցի անվանումը (անունը) | Էլեկտրոնային փոստի հասցեն |
|---|---|
| «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ | info@mts.am |
| «ՎԵՈՆ Արմենիա » ՓԲԸ | corp_tender@beeline.am |
| «Յուքոմ » ՍՊԸ | corporate@ucom.am |
| «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ | sales@rtarmenia.am |

4. **Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի, «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի, «Յուքոմ» ՍՊԸ-ի և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

**5. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացրած հայտի կազմման՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանության մասին.**

«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի, «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի և «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան, ուստի վերջիններս գնահատվում են բավարար:

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի գնահատման արդյունքում արձանագրել է անհամապատասխանություն, մասնավորապես՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) նշված է, որ «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն ցանկություն ունի մասնակցել Դատական դեպարտամենտի կողմից «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/16» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման թիվ 1 և թիվ 2 չափաբաժիններին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ: Սակայն «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից հայտ ներկայացվել է միայն թիվ 2 չափաբաժնով:

**Հանձնաժողովը որոշեց.**

Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել 2019թ. դեկտեմբերի 4-ին ժամը՝ 10:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**Հանձնաժողովի քարտուղարին.**

Հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել համապատասխան մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝

Արթուր Եղիազարյան

Անդամներ՝

Էդգար Տոնականյան

Էդգար Մելքոնյան

Արթուր Թամրազյան

Արման Հարությունյան

Քարտուղար՝

Օֆելյա Ասատրյան